

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

**3102 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ**

ԵՐԵՎԱՆ 2009

III. ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և նորոգվելները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների				
		Քննութ.	Ստուգարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն				2-րդ կուրս		3-րդ կուրս		
					Ընդամենը	Այդ թվում			3-րդ կիս. 17 շաբ.	4-րդ կիս. 18 շաբ.	5-րդ կիս. 17 շաբ.	6-րդ կիս. 14 շաբ.	
			Տեսակ. ուսուցում	Լաբոր. և գործն. աշխ.		Սեմինար պարապմունք							
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՈՒՄՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ												
1.1	Չայրոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3,4տ		72	66	6		36	36			
1.2	Տնտեսագիտության հիմունքներ		4տ		54	48	6		34	20			
1.3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		4տ		54	42	12		20	34			
1.4	Իրավունքի հիմունքներ		4տ		36	30	6		18	18			
1.5	Պատմություն		4տ		54	50	4			54			
1.6	Ռուսաց լեզու		3,4 տ		72	12	60		38	34			
1.7	Օտար լեզու		3,4 տ		72	12	60		34	38			
1.8	Ֆիզիկական կուլտուրա		3,4,5,6		132	8	124		34	36	34	28	
	ԸՆԴԱՄԵՆԸ				546	268	278		214	270	34	28	
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ												
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		4տ		36	24	12			36			
2.2	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		4տ		18	12	6			18			
	ԸՆԴԱՄԵՆԸ				54	36	18			54	-	-	
3.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԶՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ												
3.1	Չաղորդակցման հմտություններ		4տ		54	18	36			54			
3.2	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		4տ		72	36	36			72			
3.3	Անվտանգություն և առաջին օգնություն		4տ		36	20	16			36			
3.4	Համակարգչային օպերատիվության հիմունքներ		3տ		54	18	36		54				
	ԸՆԴԱՄԵՆԸ				216	92	124		54	162	-	-	
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ												
4.1	Երկրագործության և հողագիտության հիմունքներ	3			68	34	34		68				
4.2	Չողի մշակման համակարգերը և ագրոտեխնիկան		3տ	3	68	51	17		68				
4.3	Պարարտանյութեր, նրանց տեսակները և օգտագործումը		3տ		68	34	34		68				
4.4	Բույսի կյանքին անհրաժեշտ գործոնները և նրանց ռեժիմները		5տ		54	36	18				54		
4.5	Գյուղատնտեսական բեռների և արտադրանքի տեղափոխում, պահեստավորում և բաշխում		5տ		54	26	28				54		
4.6	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում	4			72	36	36			72			
4.7	Մոլախոտերը և պայքարը դրանց դեմ		4տ		36	18	18			36			
4.8	Պտղի և խաղողի տնկանյութի արտադրության տեխնոլոգիաներ		4տ		54	18	36			54			
4.9	Մշակաբույսերի սերմերի արտադրության տեխնոլոգիաներ		3տ		68	34	34		68				
4.10	Կերային մշակաբույսերի և բուսական ծագման կերերի		5տ		72	36	36				72		

	արտադրության տեխնոլոգիաները													
4.11	Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում և պլանավորում		3տ		72	36	36			72				
	ԸՆԴԱՄԵՆԸ				686	359	327			344	162	180		
5.	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
5.1	Պտղատու այգիների մշակության և բերքահավաքի տեխնոլոգիա	5			68	34	34					68		
5.2	Խաղողի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաներ		5տ	5	68	34	34					68		
5.3	Բանջարաբոստանային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները		5տ		68	34	34					68		
5.4	Բույսերի պաշտպանություն		5տ		72	36	36					72		
5.5	Ցանքաշրջանառության համակարգեր և նրանց առանձնահատկությունները		5տ		51	34	17					51		
5.6	Անասնապահական մթերքների և հումքի արտադրության տեխնոլոգիա		6տ		68	34	34						68	
5.7	Գյուղատնտեսական արտադրության հաշվառում և հաշվետվությունների կազմում		6տ		68	34	34						68	
5.8	Գյուղատնտեսական վիճակագրություն և տնտեսական գործնետության վերլուծություն		6տ		72	36	36						72	
5.9	Դաշտային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները		6տ		72	36	36						72	
5.10	Մշակաբույսերի արտադրության տեխնոլոգիաները պաշտպանված գրունտի պայմաններում		5տ		68	34	34					68		
5.11	Լանջերի վրա բազմամյա տնկարքերի հիմնման տեխնոլոգիաները		6տ		72	36	36						72	
	ԸՆԴԱՄԵՆԸ				747	382	365			-	-	395	352	
	ԸՆՏՐՈՎԻ				72								72	
	ՊԱՅՈՒՄՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				55							3	52	
	ԸՆԴԱՄԵՆԸ				2376					612	648	612	504	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				200									
	Շաբաթվա ժամերի քանակը									36	36	36	36	

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՂՐԱԺԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՅԵՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Մշակույթի պատմություն				ԿԱՔԻՆԵՏՆԵՐ
2	Վարվելակերպի հիմունքներ			1	Հայոց լեզվի
3	Գործարար խաղեր			2	Ռուսաց և օտար լեզուների
4				3	Պատմության
				4	Գյուղատնտեսության էկոնոմիկայի
				5	Մեթոդական
				6	Կենսագործունեության անվտանգության և բնապահպանության
V. ՊՐԱԿՏԻԿԱ		Կիսամյակ	Շաբաթ		
1	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	IV	3		
2	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	IV, VI	2, 4		ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
3	Նախաավարտական արտադրական պրակտիկա	VI	2	1	Քիմիայի
				2	Կենսաբանության
	ԸՆԴԱՄԵՆԸ		11	3	Ագրոքիմիայի
<p align="center">VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</p> <p>Համալիր քննություն հատուկ մասնագիտական խմբի մոդուլներից</p> <p>1. Համալիր քննություն «Գյուղատնտեսական արտադրանքի մշակում» առարկայից ա/ «Բույսերի պաշտպանություն», բ/ «Ցանքաշրջանառության համակարգեր և նրանց առանձնահատկությունները» գ/ «Մշակաբույսերի արտադրության տեխնոլոգիաները պաշտպանված գրունտի պայմաններում»,</p> <p>2. Համալիր քննություն «Գյուղատնտեսական մթերքի արտադրման տեխնոլոգիա»</p> <p>«Մշակաբույսերի մշակման և բերքահավաքի տեխնոլոգիաներ (ընդգրկում է «Դաշտային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները», , «Բանջարաբոստանային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները»</p>				4	Բուսաբուծության
				5	Պտուղ բանջարեղենի վերամշակման տեխնոլոգիայի
				6	Անասնաբուծության
				7	Գյուղատնտեսական արտադրության մեքենայացման
				8	Ինֆորմատիկայի
					ԱՐՅԵՏԱՆՈՑՆԵՐ
					ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
		1	Մարզադահլիճ		
		2	Մարզահրապարակ		

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին:
Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում ամնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված
Նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված ճյուղը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի
ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՐՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՀԴՀ 4- 08 – 001

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 54 ԺԱՄ

Տեսական պարապմունք՝ 27 ժամ
Գործնական աշխատանք՝ 27 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝ Զկան

ՈՒՍՈՒՄՆԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. սահմանի ուսումնառության անձնական նպատակները.
2. բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարի պարզ թեմաների և տեքստերի մասին.
3. նախաձեռնի, պահպանի, եզրափակի երկխոսություններ և քննարկումներ.
4. մեկնաբանի սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.
5. կատարի փաստաթղթավորում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար նակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
- բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
- գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Սովորողը ներկայացնում է իր նպատակները, կատարված վերլուծությունները,

կիրառման հնարավորությունները և ուղղությունները: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն`	2 ժամ
Գործնական պարապմունքներ`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,
- բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
- գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը կատարում է նպատակային,
- դ. հաղորդումը իրականացնում է` հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր` առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Ուսուցման ընթացքում իրականացվում է պարզ թեմաների և տեքստերի վերաբերյալ հաղորդակցվում, ներառյալ գաղափարների, կարծիքների և փորձի փոխանակում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունքներ`	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են`
 - պարզաբանումներ ստանալու ձգտումը,
 - գրառումներ կատարելը,
 - ամփոփելը,
- բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,
- դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Ուսուցման ընթացքում տարվում են աշխատանքներ մտքերն արտահայտելու, այլ անձից ստացված տեղեկատվության աչազ վերլուծելու և կողմնորոշվելու ուղղությամբ:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունքներ՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,
- բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.
- գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր: Անհրաժեշտ է զարգացնել սովորողի թերություններ և տարբերություններ նկատելու, դրանք վերլուծելու, անհրաժեշտ լուծումներ առաջարկելու ունակությունները:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունքներ՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել փաստաթղթավորում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,
- բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,
- գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրամադրվում են տարբեր փաստաթղթեր՝ պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում՝ ըստ տեսակների:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական պարապմունքներ`	6 ժամ
Գործնական պարապմունքներ`	6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԱԱՕ 4-09-001

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Այս մոդուլը մշակվել է արտադրական ձեռնարկություններում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողներին զիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ տալու համար: Այն անհրաժեշտ է արտադրական ձեռնարկության բոլոր մակարդակների աշխատողներին:

<u>ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`</u>	36 ժամ
Տեսական պարապմունք`	20 ժամ
Գործնական աշխատանք`	16 ժամ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. կարողանա ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. կարողանա շարադրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում,
3. հստակ ներկայացնի արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները,
4. կազմակերպել առաջին բուժօգնություն և ներկայացնել անհրաժեշտ միջոցները:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է շարադրում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները:
- բ. կարողանում է լրացնել ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը:
- գ. հստակ պատկերացնում է աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը:
- դ. ճիշտ է շարադրում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:

ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը:

զ. ճիշտ է շարադրում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների միջոցով՝ անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է շարադրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. Կարողանում է շարադրել տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,

բ. կարողանում է ներկայացնել էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, մասնավորապես՝ հորդեհանվտանգության կանոնները և պաշտպանությունը

գ. կարողանում է շարադրել ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Սովորողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է հստակ ներկայացնել արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. Պատկերացնում է արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները,

բ. ճիշտ շարադրում է արտադրական միկրոկլիմայի վերաբերյալ նորմատիվային պահանջները,

գ. ճիշտ ներկայացնում է արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,

դ. ճիշտ շարադրում է արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից՝ նա պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների՝ նորմաները: Բացի դրանից ուսանողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:

Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի բաղադրիչները.

- ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ՝
 - ջերմաստիճանը
 - հարաբերական խոնավությունը
 - փոշու առկայությունը
- բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ՝
 - օդափոխություն
 - ջեռուցում
 - ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսումնական գործընթացում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային տեղեկատվական գրականություն, գործիքներ, սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներ անցկացնել արտադրամասում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է կազմակերպել առաջին բուժօգնություն և ներկայացնել անհրաժեշտ միջոցները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. կարողանում է ճիշտ կատարել արհեստական շնչառություն,
- բ. կարողանում է ճիշտ կատարել սրտի աշխատանքի վերականգնում,
- գ. կարողանում է դադարեցնել արյան հոսքը և դնել վիրակապ,
- դ. կարողանում է վիրակապել կոտրվածքները ,
- ե. կատարում է առաջին օգնություն այրվածքների դեպքում,
- զ. ճիշտ է կատարում առաջին օգնությունն էլեկտրահարման դեպքում:

ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը: Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ԸԱՀ-4-09-001

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

72 ժամ

Տեսական պարապմունք՝ 36 ժամ

Գործնական աշխատանք՝ 36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ՝

Չկան

ՈՒՍՈՒՄՆԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.
2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.
3. տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում.
4. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.
5. դրսևորի քննադատական մտածողություն.
6. կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
- բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
- գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
- դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բանավոր ներկայացնում իր կենսագրությունը:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում գործերը նկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.
- գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ.
- դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.
- գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,
- դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ` ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:
- ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.
- զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական պարապմունք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.

- բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները:
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Դրսևորել քննադատական մտածողություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը:
- բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ:
- գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական պարապմունք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները:
- բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատաքային պլան):
- գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:
- դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,
- ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը:
- զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները:
- է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին

դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական պարապմունք`	8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՍԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` 303 4 - 08 - 001

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

<u>ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ`</u>	54 ժամ
	Տեսական պարապմունք` 18 ժամ
	Գործնական աշխատանք` 36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ` 2 կան

ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ `

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը`

1. կհասկանա WORD ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ, կկարողանա փակել WORD ծրագիրը,
2. կկարողանա կատարել տեքստային փաստաթղթի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ,
3. կկարողանա պահպանել փաստաթուղթը,
4. կկարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ,
5. կկարողանա տեքստային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ,
6. կկարողանա տպագրել փաստաթուղթը:
7. կունենա ինտերնետում աշխատելու իմացություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1 WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը,
- բ. բացել նոր փաստաթուղթ ,
- գ. ստեղծաչարի օգնությամբ մուտքագրել,
 - o տեքստ (առանց ֆորմատավորման),
 - o մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ),
 - o սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ),

- թվանշաններ ,
- դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ,
- ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում,
- զ. փակել փաստաթուղթը,
- է. բացել առկա փաստաթուղթը,
- ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները,

ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, ամենաշատը 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Ուսանողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն նախօրոք առաջարկված տեղում:
3. Ուսանողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղծաշարով Տեքստային Զուցիչի տեղաշարժման հնարավորությունները:
4. Ուսանողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլ են տրված որոշ անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք:

Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում:

Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում	2 ժամ
Գործնական աշխատանք	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2 . Տեքստերի տարրական ֆորմատավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,
- բ. նշել բառերը և տեքստային հատվածները,
- գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,
- դ. կատարել տողերի հավասարեցում,
- ե. փոխել միջտողային տարածությունները,
- զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով,
- է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով,
- ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,
- թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները,
- ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,
- ի. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը,
- լ. Մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ ,
 - փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ,
 - ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը,
 - ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ,
- խ. պատճենել տեքստը ,
- ծ. տեղափոխել տեքստը,
- կ. տողադարձել տեքստը,
- հ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով,

ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված` հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ:

3. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղծագործությունը տեքստը նշելու հնարավորությունները:
4. Ուսանողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Ուսանողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները:
5. Ուսանողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները:
6. Ուսանողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանքները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ռեսուրսումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 4 ժամ
 Գործնական աշխատանք 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Փաստաթղթի պահպանում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը,
- բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը ,
- գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ, ֆորմատավորումները և փոփոխությունները,

ԳՆԱՋԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ:
2. Ուսանողը մուտքագրում է մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանում է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը:
3. Ուսանողին տրվում է պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ նա կատարում է փոփոխություններ: Հանձնարարվում է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում առաջադրանքները ամբողջությամբ և առանց էական սխալներ կատարելու դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում՝ ունենալով տարբեր փաստաթղթերի մոդուլներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ
 Գործնական աշխատանք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. պատրաստել աղյուսակ,
- բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,
- գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ,
- դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ,
- ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները,
- զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ,

- է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ ,
- ը. փոխել աղյուսակի գծերի գույնը ,
- թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

- 4. Ուսանողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի:
 - 5. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ դրա հետ, պահպանում է վերջնական տարբերակը և տպագրում: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա:
- Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարում է ճիշտ, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան բացթողումներ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ռեսուրսումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ աղյուսակների առավել տարածված և կիրառելի նմուշների օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ
 Գործնական աշխատանք 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5 Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
 ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ ,
- բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,
- գ. գծագրել կանոնավոր պատկերներ,
- դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝
 - տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ,
 - պատճենել,
 - պտտել,
 - շրջել,
 - փոխել չափերը,
- ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները,
- զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ,
- է. գծագրել տեքստային բլոկներ,
- ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները,
- թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները,
- ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները ,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

- 1. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակը: Ուսանողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա:
- 2. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ: Նա այդ փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է պատկերների ֆորմատավորման գործողությունները: Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների, կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ
Գործնական աշխատանք 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Փաստաթղթի տպագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. Նախադիտման ռեժիմում *թերթել* փաստաթուղթը,
- բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները,
- գ. տպագրել փաստաթուղթը ,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1.Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն:

2.Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական հանձնարարությունը ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անճշտություններ թույլ տալ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով՝ անհատական համակարգիչների կաթինետում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական պարապմունք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Ինտերնետում աշխատելու իմացություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը,
- բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,
- գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը,
- դ. իմանալ History հրամանի նշանակությունը,
- ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,
- զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,
- է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,
- ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,
- թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,
- ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,
- ի. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,
- լ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,
- խ. ճիշտ օգտվելով ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից, գտնել համարժեք ռադիոլեւեռներ, փոխարինման, համապատասխան հեռուստատեսային սարքավորումների համալարման ինֆորմացիան,
- ծ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակությունը,
- կ. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը:
2. Ուսանողին հանձնարարվում է ցուցադրել History և Favorites հրամանները, բացատրել:
3. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը:
4. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը:
5. Ուսանողին հանձնարարվում է բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական ինֆորմացիան այդ էջից:

6. Ուսանողին հանձնարարվում է կատարել ինֆորմացիայի որոնում որևէ թեմայի շուրջ՝ օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները:

7. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը: Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական մակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ռեսուրսներն իրականացվում է անհատական համակարգիչների

կաբինետում, որը ունի ինտերնետին միանալու հնարավորություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 6 ժամ

Գործնական աշխատանք 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԳՏԳ 4-09-001

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտության «Գյուղատնտես» որակավորմամբ որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է տալ գիտելիքներ հողագոյացման, հողի կազմի և կառուցվածքի առանձնահատկությունների՝ մեխանիկական, ֆիզիկական ու կենսաբանական գործոնների նշանակության վերաբերյալ և գործնական կարողություններ՝ ուղղված հողի բերրիության բարձրացմանը, վերականգնմանը և բարելավմանը:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 68 ժամ
Տեսական պարապմունք 34 ժամ
Գործնական աշխատանք 34 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝ Չկան

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. Կարողանալ ճիշտ շարադրել հողառաջացման բնական և պատմական գործոնները, հողառաջացման գործընթացը պայմանավորող բույսերի բնական խմբավորումները, ինչպես նաև հողի մորֆոլոգիական հատկանիշներն ու գեներտիկական հորիզոնները:
2. Կարողանալ ճիշտ ներկայացնել հողի կառուցվածքը, այն քայքայող գործոնները, ճիշտ գնահատել հողի հիմնական ֆիզիկական և ֆիզիկաքիմիական հատկությունները և շարադրել տարբեր հողատիպերի բնութագիրը:
3. Կարողանալ ճիշտ ներկայացնել հողում հումուսի, հանքային և օրգանական նյութերի գոյացման գործընթացն ու աղբյուրները, հողում սննդատարների քանակը, դրանց փոխակերպումներն, այլ օրգանիզմների դերը նյութերի փոխարկման բնագավառում:
4. Կարողանալ ճիշտ շարադրել հողի ջրային, ջերմային, օդային, սննդային ռեժիմները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանա ճիշտ շարադրել հողառաջացման բնական և պատմական գործոնները, հողառաջացման գործընթացը պայմանավորող բույսերի բնական խմբավորումները, ինչպես նաև հողի մորֆոլոգիական հատկանիշներն ու գեներտիկական հորիզոնները:

կարողանա շարադրել հողի ֆիզիկաքիմիական հատկությունները և որոշել նրա մեխանիկական կազմը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է սահմանում հողառաջացման բնական և պատմական գործոնները ու հիմնական պայմանները՝ կլիման, բուսականությունը, ռելիեֆը, ժամանակը.
- բ. ճիշտ է շարադրում հողառաջացման գործընթացը պայմանավորող բույսերի բնական խմբավորումները՝ բարձրակարգ, ցածրակարգ.
- գ. ճիշտ է ներկայացնում հողի մորֆոլոգիական հատկանիշները և ծագումնաբանական հորիզոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին կտրվեն առաջադրանքներ հողի կազմի և հատկությունների վերաբերվող գիտելիքների ստուգման նպատակով: Գիտելիքների ստուգումը կկատարվի հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով: Սովորողին կտրվի նաև հողանմուշ և կպահանջվի գործնական աշխատանքի միջոցով որոշել դրա մեխանիկական կազմը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հողի հատկությունների մասին և հողի մեխանիկական կազմը որոշելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր հողատեսակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, սարքեր, գործիքներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանալ ճիշտ ներկայացնել հողի կառուցվածքը, այն քայքայող գործոնները, ճիշտ գնահատել հողի հիմնական ֆիզիկական և ֆիզիկաքիմիական հատկությունները և շարադրել տարբեր հողատիպերի բնութագիրը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում հողի կառուցվածքը, դրա նշանակությունը և այն քայքայող գործոնները /մեխանիկական, ֆիզիկական, կենսաբանական/.
- բ. ճիշտ է գնահատում հողի հիմնական ֆիզիկական և ֆիզիկաքիմիական հատկությունները՝ ծավալային կշիռ, տեսակարար կշիռ, ծակոտկենություն,
- գ. կարողանում է որոշել հողի ծավալային կշիռը, տեսակարար կշիռը, կապակցականությունը, փքվածությունը, առածգականությունը, կաչելիությունը,
- դ. ճիշտ է շարադրում ՀՀ տարբեր հողատիպերի նկարագիրը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին առաջադրանք է տրվում առանձին մշակաբույսերի մշակման գործընթացների համար որոշելու մեքենատրակտորային ագրեգատների, վառելանյութերի և քսայուղերի քանակը, կազմելու տրակտորների և ավտոմոբիլների ծանրաբեռնվածության գրաֆիկներ: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի, թեսթերի կամ գործնական աշխատանքի միջոցով: Աղյուսքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Թույլատրվում են աննշան թերություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Աղյուսքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների, գործնական և կուրսային աշխատանքի կատարման միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ մեքենայական ագրեգատների շահագործման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր մեքենաների և գործիքների դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Դասակարգում է տեխնիկական սպասարկումների տեսակները և որոշել նրանց քանակը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ըստ գործող չափորոշիչների որոշում է տեխնիկական սպասարկումների և նորոգումների տեսակները, քանակը և կատարման ժամկետները,
բ. կազմում է տրակտորների, ավտոմոբիլների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների աշխատանքի պլան գրաֆիկը:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին առաջադրանք է տրվում առանձին տրակտորների, ավտոմոբիլների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների համար որոշել տեխսպասարկումների տեսակը, քանակը, աշխատանքի ծավալը, ժամկետները և կազմել պլան գրաֆիկ: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի, թեսթերի կամ գործնական աշխատանքի միջոցով: Աղյուսքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Թույլատրվում են աննշան թերություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Աղյուսքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տեխնիկական միջոցների սպասարկման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարողանում է ճիշտ շարադրել մեքենաների պահպանման եղանակները և գործընթացները:

ԿԱՏԱՐՄԱՆ ԶՎՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է շարադրում տեխնիկայի պահպանման դրույթներն և հրահանգները,
- բ. ճիշտ է շարադրում բաց, փակ և կոմբինացված պահպանման եղանակների առանձնահատկությունները,
- գ. կարողանում է պահպանման ժամանակ ընտրել խնամքի և տեխնիկական սպասարկման միջոցներ և կատարել տեխնիկական սպասարկում,
- դ. կարողանում է պահպանման ժամանակ ձեռնարկել հակահրդեհային միջոցառումներ և ընտրել համապատասխան միջոցներ:

ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գիտելիքներ ստուգելու նպատակով ուսանողներին կտրվեն առաջադրանքներ տեխնիկական միջոցների պահպանման և պահպանման ժամանակ տեխնիկական միջոցների սպասարկման եղանակների, միջոցների և հակահրդեհային միջոցառումների վերաբերյալ: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի բոլոր պահանջների կատարման վրա: Թույլատրվում են աննշան թերություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տեխնիկական միջոցների պահպանման, պահպանման ժամանակ տեխնիկական սպասարկումների ձևերի, միջոցների և հակահրդեհային միջոցառումների մասին: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, ուսումնական գրականություն և դիտակտիվ նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կարողանում է շարադրել տրակտորային ագրեգատների և ավտոմոբիլների վարման անվտանգության կանոնները:

ԿԱՏԱՐՄԱՆ ԶՎՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է շարադրում տրակտորների և ավտոմեքենաների վրա աշխատելու ժամանակ կիրառվող անվտանգության կանոնները,
- բ. կարողանում է հաղորդել տրակտորիստին և ավտովարորդին անհրաժեշտ հոգեֆիզիկական և հոգեկան պահանջվող հատկություններ:

ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին կտրվեն մի շարք առաջադրանքներ տրակտորների և ավտոմեքենաների վրա աշխատելու ժամանակ կիրառվող անվտանգության տեխնիկայի կանոններին, տրակտորիստին և ավտովարորդին անհրաժեշտ հոգեֆիզիկական և հոգեկան հատկություններին վերաբերվող գիտելիքներ ստուգելու նպատակով, ինչպես նաև ուսանողին կառաջարկվեն երթուճակ տրակտորի (ավտոմեքենայի) վրա կատարել մի շարք վարժություններ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի բոլոր պահանջների կատարման վրա: Թույլատրվում են աննշան թերություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տրակտորների (ավտոմեքենաների) վրա աշխատելու ժամանակ կիրառվող անվտանգության տեխնիկայի կանոնների, տրակտորիստին (ավտովարորդին) անհրաժեշտ հոգեֆիզիկական և հոգեկան պահանջվող հատկությունների մասին, ինչպես նաև ուսանողի մոտ ձևավորել տրակտորներ վարելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, ուսումնական գրականություն, անիվավոր և թրթուրավոր տրակտորներ, ավտոմեքենաներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6 ժամ
---------------------	-------

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` «ՄՈԼԱՆՈՏԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԸ ԴՐԱՆՑ ԴԵՄ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԳՏԳ 4-09-007

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտության` «Գյուղատնտես» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է տալ տեսական գիտելիքներ գյուղատնտեսական մշակաբույսերի, մոլախոտերի հասցրած վնասի, դրանց կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ և գործնական կարողություններ` ուղղված մոլախոտերի դեմ պայքարի ագրոտեխնիկական և քիմիական միջոցառումների կիրառմանը:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 36 ժամ
Տեսական պարապմունք` 18 ժամ
Գործնական աշխատանք` 18 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅՎԱՆՁՆԵՐԸ`

Ուսանողը պետք է նախապես տիրապետի «Երկրագործության և հողագիտության հիմունքներ» ԳՏԳ-4-09-001 մոդուլին

ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Մոդուլի յուրացումից հետո ուսանողը պետք է`

1. Կարողանալ ճիշտ դասակարգել մոլախոտերը և ներկայացնել դրանց կենսաբանական առանձնահատկությունները:
2. Կարողանալ ներկայացնել մոլախոտերի դեմ պայքարի հիմունքները և ագրոտեխնիկական միջոցառումների անհրաժեշտությունը:
3. Կարողանալ ներկայացնել մոլախոտերի դեմ քիմիական պայքարի հնարավորությունները և դասակարգել հերբիցիդները` ըստ ազդեցության բնույթի:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանա ճիշտ դասակարգել մոլախոտերը և ներկայացնել դրանց կենսաբանական առանձնահատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է նկարագրում մոլախոտերի հասցրած վնասի մասին.
- բ. կարողանում է տարբերել գուղատնտեսական մշակաբույսերի ցանքերում տարածված /սեզետալ/ մոլախոտերը արտաքին տեսքից,
- գ. ճիշտ է ներկայացնում մոլախոտերի կենսաբանական առանձնահատկությունները /միաշաքիլ, երկշաքիլ և բազմացման ձևերը/.
- դ. կարողանում է ճիշտ դասակարգել մոլախոտերը /բազմամյա, սակավամյա./:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Գիտելիքների ստուգման նպատակով ուսանողներին առաջադրանք է տրվում ըստ կատարման չափանիշների: Ուսանողը պետք կարողանա տարբերել մոլախոտերը միմյանցից, հստակ շարադրել նրանց կենսաբանական առանձնահատկությունները և կուլտուրական մշակաբույսերի վրա նրանց վնասակար ազդեցությունը: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե թեստերի 90 %-ը կատարվի ճիշտ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ մոլախոտերի տեսակների, նրանց կենսաբանական առանձնահատկությունների և կուլտուրական մշակաբույսերի վրա վնասակար ազդեցությունի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր տեսակի մոլախոտեր, դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, ուսումնական գրականություն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`	Տեսական պարապմունք`	6 ժամ
	Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանա ներկայացնել մոլախոտերի դեմ պայքարի հիմունքները և ագրոտեխնիկական միջոցառումների անհրաժեշտությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում մոլախոտերի դեմ պայքարի ագրոտեխնիկական միջոցառումների անհրաժեշտությունը.
- բ. ճիշտ է նկարագրում ագրոտեխնիկական միջոցառումները /նախագուշակական և ոչնչացնող/:
- գ. ճիշտ է ներկայացնում մոլախոտերի դեմ պայքարը հողի մշակման համակարգում,
- դ. ճիշտ է ներկայացնում մոլախոտերի դեմ պայքարը հողի պարարտացման համակարգում,
- ե. ճիշտ է ներկայացնում մոլախոտերի դեմ պայքարը հողի ցանքաշրջանառության համակարգում:

ԳՆԱՋԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողի գիտելիքների ստուգման նպատակով կտրվեն առաջադրանքներ` ըստ կատարման չափանիշների: Ուսանողը, ըստ մոլախոտերի տեսակների և նրանց զարգացման բնույթի որոշում է ագրոտեխնիկական միջոցառումների, ցանքաշրջանառությունների և հողի մշակման տեսակները: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե թեստերի 90 %-ը կատարվի ճշտությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ ագրոտեխնիկական միջոցառումների, հողի մշակման, պարարտացման և ցանքաշրջանառության համակարգերում մոլախոտերի դեմ պայքարի ձևերի մասին: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր տեսակի մոլախոտեր, դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, ուսումնական գրականություն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`	Տեսական պարապմունք`	6 ժամ
	Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանա ներկայացնել մոլախոտերի դեմ քիմիական պայքարի հնարավորությունները և դասակարգել հերբիցիդները` ըստ ազդեցության բնույթի:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է դասակարգում հերբիցիդները.
- բ. կարողանում է տալ հերբիցիդների բնութագիրը.
- գ. ճիշտ է նկարագրում հերբիցիդները` ըստ ազդեցության բնույթի /ընդհանուր ազդեցության, հողային և ոչ հողային/:
- դ. ճիշտ է ներկայացնում մոլախոտերի դեմ պայքարը` ագրոտեխնիկական և քիմիական միջոցառումների համատեղ կիրառմամբ.
- ե. ճիշտ է ներկայացնում տարբեր հերբիցիդների օգտագործման ժամկետները.
- զ. ճիշտ է շարադրում հերբիցիդների հետ աշխատելու անվտանգության կանոնները:

ԳՆԱՋԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Ուսանողի գիտելիքների ստուգման նպատակով տրվում են առաջադրանքներ ըստ կատարման չափանիշների: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի և թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի թեստերի 90%-ը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ հերթիցիդների դասակարգման, նրանց բնութագրի, մոլախոտերի դեմ պայքարում ագրոտեխնիկական և քիմիական միջոցառումների համատեղ կիրառման, տարբեր հերթիցիդների օգտագործման ժամկետների և հերթիցիդների հետ աշխատելու անվտանգության կանոնների մասին: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր տեսակի հերթիցիդներ, դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, ուսումնական գրականություն:

<u>ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`</u>	Տեսական պարապմունք`	6 ժամ
	Գործնական աշխատանք`	6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊՏՂԻ ԵՎ ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԳՏԳ 4-09-008

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտության` «Գյուղատնտես» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ տնկարանի, նրա բաժինների, պատվաստի եղանակների, պատվաստների աճեցման մասին:

<u>ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`</u>	54 ժամ
	Տեսական պարապմունք` 18 ժամ
	Գործնական աշխատանք` 36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՁՆԵՐԸ`

Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳՏԳ 4-09-001 «Հողի մշակման համակարգերը և ագրոտեխնիկան», ԳՏԳ 4-09-004 «Բույսերի կյանքին անհրաժեշտ գործոնները և նրանց ռեժիմները»

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. Կարողանալ հստակ նկարագրել տնկարանի տեսակները, նրանց կառուցվածքը և հնարավորությունները,
2. Կարողանալ հստակ ներկայացնել տնկարանի հողամասի ընտրությունը, հողամասի տեղաձևումը, տնկարանի բաժինները,
3. Կարողանալ հստակ շարադրել պտղատու բույսերի և խաղողի բազմացման եղանակները,
4. Կարողանալ նկարագրել պտղատու բույսերի տնկիների աճեցումը հիմնական տնկարանում,
5. Կարողանալ հստակ շարադրել խաղողի կտրոնների տնկման ժամանակը և տեխնիկան:
6. Կարողանալ հստակ շարադրել տնկարանի խմամքի աշխատանքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանալ հստակ նկարագրել տնկարանի տեսակները, նրանց կառուցվածքը և հնարավորությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

ա. ճիշտ է ներկայացնում տնկարանի տեսակները,

- բ. ճիշտ է շարադրում պտղատու բույսերի տնկարանի կառուցվածքը,
- գ. ճիշտ է շարադրում յուրարմատ տնկարանի կազմակերպման աշխատանքները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողի գիտելիքների ստուգման նպատակով տրվում են առաջադրանքներ ըստ կատարման չափանիշների: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի և թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե թեստերի 90 %-ը կատարվի ճշտությամբ: Հարց ու պատասխանի ժամանակ հնարավոր են աննշան թերություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տնկարանի տեսակների, պտղատու բույսերի տնկարանի կառուցվածքի և յուրարմատ տնկարանի կազմակերպման աշխատանքների մասին: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, ուսումնական գրականություն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանա հստակ ներկայացնել տնկարանի հողամասի ընտրությունը, հողամասի տեղաձևումը, տնկարանի բաժինները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է շարադրում տնկարանի հողամասին ներկայացվող պահանջներ,
- բ. ճիշտ է շարադրում տնկարանի հողի նախապատրաստումը բաժանման,
- գ. Կարողանում է ճիշտ պլանավորել տնկարանի բաժինները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ`

Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով ուսանողից պահանջվում է շարադրել տնկարանի հողամասին ներկայացվող պահանջները, տնկարանի հողի բաժանմանը նախորդող գործընթացները, բաժինների ճիշտ պլանավորումը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա: Թույլատրվում են աննշան թերություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տնկարանի հողամասին ներկայացվող պահանջների, տնկարանի հողի բաժանմանը նախորդող գործընթացների, բաժինների ճիշտ պլանավորման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանա հստակ շարադրել պտղատու բույսերի և խաղողի բազմացման եղանակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում բազմացման եղանակները և նրանց առանձնահատկությունները,
- բ. ճիշտ է նկարագրում սերմերի հավաքումը նախացանքային մշակումը (ստրասիֆիկացիա),
- գ. ճիշտ է որոշում ցանքի նորման, ժամկետները, եղանակները, խնամքը,

դ. Հստակ շարադրում են խաղողի կտրոնների ընտրությունը, նախապատրաստման աշխատանքները, տնկումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Ուսանողի գիտելիքների ստուգման նպատակով տրվում են առաջադրանքներ ըստ կատարման չափանիշների: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե ուսանողը կազմի աշխատանքային պլան, որի մեջ արտացոլվի մեկ տեսակի մշակաբույսի բազմացման եղանակները ըստ կատարման չափանիշների: Թույլատրվում են աննշան թերություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ բույսերի բազմացման եղանակների, նրանց առանձնահատկությունների, սերմերի հավաքման, նախացանքային մշակման, ցանքի նորմաների, ժամկետների և եղանակների որոշման, խնամքի, խաղողի կտրոնների ընտրության, նախապատրաստման աշխատանքների և տնկման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանա նկարագրել պտղատու բույսերի տնկիների աճեցումը հիմնական տնկարանում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում տնկիների աճեցումը հիմնական տնկարանում,
- բ. ճիշտ է ներկայացնում պատվաստի ձևերը, ժամկետները, պատվաստի ժամանակ օգտագործվող գործիքները և նյութերը,
- գ. ճիշտ է որոշում պատվաստի կաչողականությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Գիտելիքների ստուգման ժամանակ ուսանողից կպահանջվի տալ հստակ բացատրություն հիմնական տնկարանում տնկիների աճեցման, պատվաստի ձևերի, ժամկետների, պատվաստի ժամանակ օգտագործվող գործիքների և նյութերի, պատվաստի կաչողականության վերաբերյալ: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի, թեստերի կամ գործնական աշխատանքի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական եթե կատարվեն թեստերի 90%-ը, իսկ գործնական առաջադրանքները՝ ամբողջությամբ (հնարավոր են աննշան թերություններ):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ հիմնական տնկարանում տնկիների աճեցման, պատվաստի ձևերի, ժամկետների, պատվաստի ժամանակ օգտագործվող գործիքների և նյութերի, պատվաստի կաչողականության վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարողանա հստակ շարադրել խաղողի կտրոնների տնկման ժամանակը և տեխնիկան:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է նկարագրում կտրոնների կիլեցումը,
- բ. ճիշտ է որոշում տնկման համար կտրոնների կենսունակությունը,

գ. Ճիշտ է շարադրում տնկման համար հողի նախապատրաստման և կտրոնների տնկման աշխատանքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ`

Գիտելիքների ստուգման ժամանակ ուսանողից կպահանջվի տալ հստակ բացատրություն կտրոնների կիլչեցման, տնկման համար կտրոնների կենսունակության որոշման, տնկման համար հողի նախապատրաստման և կտրոնների տնկման աշխատանքների տնկման ժամանակի և տեխնիկան միջոցների վերաբերյալ: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի, թեստերի կամ գործնական աշխատանքի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի բոլոր պահանջների կատարման վրա: Թույլատրվում են աննշան թերություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ կտրոնների կիլչեցման, տնկման համար կտրոնների կենսունակության որոշման, հողի նախապատրաստման և կտրոնների տնկման աշխատանքների տնկման ժամանակի, տեխնիկան միջոցների և վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կարողանա հստակ շարադրել տնկարանի խնամքի աշխատանքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է շարադրում տնկարանի 1, 2 ,3 դաշտերի խնամքի աշխատանքները,
- բ. ճիշտ է շարադրում տնկարանի հողի խնամքի աշխատանքները,
- գ. ճիշտ է ներկայացնում տնկիների ձևավորման աշխատանքները ելմելով տեսակից, սորտից,
- դ. ճիշտ է շարադրում տնկիների հանումը և պահպանումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ`

Ուսանողին տրվում է առաջադրանք ըստ կատարման չափանիշների: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի բոլոր պահանջների կատարման վրա, որի ընթացքում ուսանողը պատասխանում է թեստերի 80 տոկոսին, իսկ հարց ու պատասխանի միջոցով արտացոլում է գիտելիքները, որի ժամանակ կարող է թույլ տալ ոչ էական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տնկարանի 1, 2 ,3 դաշտերի, տնկարանի հողի խնամքի աշխատանքների, ըստ բույսերի տեսակի և սորտի տնկիների ձևավորման աշխատանքների, տնկիների հանման և պահպանման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄՇԱԿԱՐՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ ԳՏԳ 4-09-009

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտության՝ «Գյուղատնտես» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ սերմերի բարձրորակ տեսակների արտադրության տեխնոլոգիայի, սորտային սերմերի բազմացման, դրանց պահպանման և տնտեսություններին մատակարարման վերաբերյալ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 68 ժամ
Տեսական պարապմունք՝ 34 ժամ
Գործնական աշխատանք՝ 34 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել ՊՏԳ 4-09-008 դաշտային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները

Արդյունքները՝

Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Կարողանալ բացատրել սերմերի ձևավորման պայմանների ազդեցությունը, նրանց որակական ցուցանիշների վրա,
2. Կարողանալ բացատրել սերմերի զարգացումը, հասունացումը և հանգիստը,
3. Կարողանալ ստուգել սերմերի ցանքային որակը,
4. Կարողանալ բացատրել սերմերի պահպանման և նախացանքային մշակման աշխատանքները:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանալ բացատրել սերմերի ձևավորման պայմանների ազդեցությունը, նրանց որակական ցուցանիշների վրա:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում ագրոտեխնիկայի ազդեցությունը բույսերի սերմնարտադրողականության և սերմի որակի վրա,
- բ. ճիշտ է բացատրում սննդառության գլխավոր տարրերի փոխհարաբերության ազդեցությունը բարձրորակ սերմ ստանալու համար,
- գ. ճիշտ է բացատրում սնման մակերեսի ազդեցությունը բարձրորակ սերմ ստանալու գործում:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Գիտելիքների ստուգման նպատակով ուսանողին տրվում է բանավոր առաջադրանք՝ ըստ կատարման չափանիշների: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե հարց ու պատասխանի միջոցով ուսանողը յուրաքանչյուր հարցին տա սպառիչ պատասխան: Հնարավոր են անձան սխալներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ բույսերի սերմնարտադրողականության և սերմի որակի վրա ագրոտեխնիկայի, սննդառության գլխավոր տարրերի փոխհարաբերության և սնման մակերեսի ազդեցության վերաբերյալ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 8 ժամ
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2 Կարողանալ բացատրել սերմերի զարգացումը, հասունացումը և հանգիստը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է բացատրում սերմերի զարգացումը,

- բ. ճիշտ է բացատրում սերմերի հետերեքահավաքյան հասունացումը,
- գ. ճիշտ է բացատրում սերմերի հանգստի շրջանը և սերմերի շնչառությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ`

Գիտելիքների ստուգման նպատակով ուսանողին տրվում է առաջադրանք ըստ կատարման չափանիշների: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի միփոցով: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե ուսանողը յուրաքանչյուր հարցին տա սպառիչ պատասխան: Հնարավոր են ոչ էական թերություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ սերմերի զարգացման, հետերեքահավաքյան հասունացման, հանգստի շրջանի և սերմերի շնչառության վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	8 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանա ստուգել սերմերի ցանքային որակը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. որոշում է սերմերի մաքրությունը,
- բ. որոշում է սերմերի ծլունակությունը և ծլման էներգիան,
- գ. Կարողանում է որոշել սերմերի տնտեսական պիտանիությունը,
- դ. Կարողանում է որոշել սերմերի բացարձակ կշիռը,
- ե. Կարողանում է որոշել սերմերի խոնավությունը,
- զ. ճիշտ է բացատրում սերմերի` հիվանդություններով և վնասատուներով վարակվածությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ`

Գիտելիքների ստուգման նպատակով կտրվեն առաջադրանքներ, որոնց կատարման ժամանակ ուսանողը տալիս է հստակ բացատրություն ա) սերմերի մաքրության, բ) ծլունակության և ծլման էներգիայի, գ) տնտեսական պիտանիության, դ) հիվանդություններով և վնասատուներով վարակվածության վերաբերյալ և որոշում սերմերի բացարձակ կշիռը և խոնավությունը : Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե ուսանողը կարողանա որոշել որևիցե սերմի խոնավությունը, սերմերի բացարձակ կշիռը և խոնավությունը: Թույլատրելի են ոչ էական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ սերմերի մաքրության, ծլունակության և ծլման էներգիայի, տնտեսական պիտանիության, բացարձակ կշռի և խոնավության որոշման, հիվանդություններով և վնասատուներով վարակվածության վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, բացարձակ կշռի և խոնավության որոշման համար չափիչ սարքեր, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանալ բացատրել սերմերի պահպանման և նախացանքային մշակման աշխատանքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է բացատրում սերմերի չորացման, գտման և տեսակավորման աշխատանքները,

- բ. ճիշտ է բացատրում սերմերի պահպանման աշխատանքները,
- գ. ճիշտ է բացատրում սերմերի ախտահանման աշխատանքները,
- դ. ճիշտ է բացատրում սերմերի օդաջերմային մշակման աշխատանքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ`

Գիտելիքների ստուգման նպատակով ուսանողին տրվում է առաջադրանք` ըստ կատարման չափանիշների: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե ուսանողը ներկայացնի սերմերի տեսակավորման, պահպանման և մշակման աշխատանքները, որի ընթացքում ուսանողը յուրաքանչյուր հարցին տալիս է սպառիչ պատասխան: Ուսանողը կարող է թույլ տալ ոչ էական սխալներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ սերմերի չորացման, զտման և տեսակավորման, պահպանման, ախտահանման, օդաջերմային մշակման աշխատանքների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, դիտակտիվ մյուսեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	8 ժամ
Գործնական պարապմունք`	8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԵՐԱՅԻՆ ՄՇԱԿԱՐՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ԿԵՐԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԳՏԳ 4-09-010

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտության` «Գյուղատնտես» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ գյուղատնտեսության արտադրության կարևորագույն խնդիրներից` անասնապահության համար կերային բազայի ստեղծման գործում կերային մշակաբույսերի` դաշտային կերարտադրության և արոտավայրային ու խոտհարքային բույսերի` արոտամարգագետնային կերարտադրության տեխնոլոգիաների վերաբերյալ, կարևորելով դաշտային և բնական խոտհարքերից բերքի հավաքման, հումքի մշակման և մթերման, կոպիտ, հյութալի, համակցված և հարստացված բուսական կերերի ստացման, կերերի երկարատև պահպանման խնդիրները

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

	72 ժամ
Տեսական պարապմունք`	36 ժամ
Գործնական աշխատանք`	36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ`

Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՏԳ 4-09-002 «Հողի մշակման համակարգերը և ագրոտեխնիկան»

ՈՒՍՈՒՄՆԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. Կարողանալ ներկայացնել դաշտային կերարտադրության բազայի ստեղծման համար կարևոր նշանակություն ունեցող բազմամյա և միամյա խոտաբույսերը, հատիկակերային և հատիկաընդեղեն, սիլոսային, բոստանային կերաբույսերը և արմատապտուղները,
2. Կարողանալ ներկայացնել բնական արոտավայրերի և խոտհարքերի բուսականության նշանակությունը կերերի ստացման համար,
3. Կարողանալ տիրապետել կոպիտ, հյութալի, համակցված և հարստացված բուսական կերերի ստացման տեխնոլոգիաներին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանալ ներկայացնել դաշտային կերարտադրության բազայի ստեղծման համար կարևոր նշանակություն ունեցող բազմամյա և միամյա խոտաբույսերը, հատիկակերային և հատիկաընդեղեն, սիլոսային, բոստանային կերաբույսերը և արմատապտուղները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է բացատրում և կարևորում դաշտային ցանքատարածություններում կերաբույսերի, ինչպես նաև մեր հանրապետությունում օգտագործվող կերաբույսերի՝ առվույտ, կորնգան, երեքնուկ, եգիպտացորեն, գարի, վարսակ, տարեկան, հլածուկ, արևածաղիկ, ճակնդեղ և այլ կերային բույսերի, ցանքի կատարման լավագույն ժամկետները, բերքի աճեցման և անկորուստ հավաքման խնդիրները,

բ. տիրապետում է կերարտադրության նպատակով դաշտերի միջանկյալ ցանքաշրջանառության տեխնոլոգիաներին, երբ օգտագործում են ցանքաշրջանառության դաշտերի մեջ ընկած ժամանակաշրջանը, լրացուցիչ բերք ստանալու նպատակով,

գ. տիրապետում է կերարտադրության արդյունավետ միջոցառումներից՝ խառը ցանքերի տեխնոլոգիաներին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Գիտելիքների ստուգման նպատակով ուսանողին կտրվի գործնական աշխատանք ըստ կատարման չափանիշների: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե ուսանողը կարողանա մշակել աշխատանքային պլան, որն իր մեջ կներառի դաշտային կերաբույսերից առնվազն մեկ տեսակի մշակման, հավաքման ամբողջ գործընթացը: Հնարավոր է որոշ բացթողումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ դաշտային ցանքատարածություններում կերաբույսերի, ինչպես նաև մեր հանրապետությունում օգտագործվող կերաբույսերի՝ առվույտի, կորնգանի, երեքնուկի, եգիպտացորենի, գարու, վարսակի, տարեկանի, հլածուկի, արևածաղիկի, ճակնդեղի և այլ կերային բույսերի, ցանքի կատարման լավագույն ժամկետների, բերքի աճեցման և անկորուստ հավաքման խնդիրների, կերարտադրության նպատակով դաշտերի միջանկյալ ցանքաշրջանառության տեխնոլոգիաների՝ ցանքաշրջանառության դաշտերի մեջ ընկած ժամանակաշրջանի, լրացուցիչ բերք ստանալու նպատակով, կերարտադրության արդյունավետ միջոցառումներից՝ խառը ցանքերի տեխնոլոգիաների վերաբերյալ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, բացարձակ կշռի և խոնավության որոշման համար չափիչ սարքեր, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՄՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	12 ժամ
Գործնական պարապմունք՝	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանա ներկայացնել բնական արոտավայրերի և խոտհարքերի բուսականության նշանակությունը կերերի ստացման համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է գնահատում արոտավայրային ու խոտհարքային բուսականության դերը կերարտադրության տեխնոլոգիաներում,

բ. ճիշտ է գնահատում բնական արոտավայրերի և խոտհարքերի ռացիոնալ օգտագործումը և հիմնավորում է նրանց բնապահպանական նշանակությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Գիտելիքների ստուգման նպատակով ուսանողին տրվում է բանավոր առաջադրանք՝ ըստ կատարման չափանիշների: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե ուսանողը կարողանա բանավոր տալ հարցերին սպառիչ պատասխաններ (թույլատրվում են աննշան թերություններ):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ կերպարտադրության տեխնոլոգիաներում արոտավայրային ու խոտհարքային բուսականության դերի, բնական արոտավայրերի և խոտհարքների ռացիոնալ օգտագործման, հիմնավորման և նրանց բնապահպանական նշանակության վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	12 ժամ
Գործնական պարապմունք՝	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանա տիրապետել կոպիտ, հյութալի, համակցված և հարստացված բուսական կերերի ստացման տեխնոլոգիաներին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում կոպիտ և հյութալի կերերի առանձնահատկությունները,
- բ. ճիշտ է բացատրում կանաչ հյութալի խոտի մթերումը, սենաժավորումը և քիմիական նյութերով պահածոյացումը,
- գ. ճիշտ է բացատրում սիլոսացումը, որպես բուսական հումքի բնական պահածոյացում, հիմնավորում է սիլոսացման մանրէաբանական գործընթացը և օգտագործվող բուսական հումքը,
- դ. ճիշտ է բացատրում չոր խոտի, ծղոտի մթերումը, խոտային ալյուրի, հատիկավոր և հատիկալընդեղեն բույսերի ալյուրի, թեփի, չոր ժոմի ստացումը,
- ե. ճիշտ է բացատրում բուսական կերերի կենսաբանական արժեքի բարձրացման նպատակով կերերի համակցումը՝ մսաոսկրային ալյուրի, ձկնային ալյուրի, ինչպես նաև կերերի հարստացումը այնպիսի հավելումներով, ինչպես՝ վիտամիններ, ամինաթթուներ, անտիբիոտիկներ, սպիտակուցներ,
- զ. ճիշտ է բացատրում տարբեր կերերի որակական չափանիշների երկարատև պահպանման առանձնահատկությունները,
- է. տեսել է և պատկերացում ունի սենաժավորման, սիլոսացման համար կիրառվող կառույցների մասին ,
- ը. ճիշտ է բացատրում բուսական ծագման կերերի կիրառումը անասնաբուժական տարբեր ճյուղերում:

ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Գիտելիքների ստուգման նպատակով ուսանողին տրվում է առաջադրանք՝ ըստ կատարման չափանիշների: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի և թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե ուսանողը կարողանա բանավոր հարցերին տալ սպառիչ պատասխաններ (հաշվի չառնել որոշ թերություններ): Կտրվեն թեստեր, որն իր մեջ կներառի հարցեր կատարման չափանիշներից, ուսանողը պիտի պատասխանի թեստերի 80տոկոսին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ կերպարտադրության տեխնոլոգիաներում արոտավայրային ու խոտհարքային բուսականության դերի, բնական արոտավայրերի և խոտհարքների ռացիոնալ օգտագործման, հիմնավորման և նրանց բնապահպանական նշանակության վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	12 ժամ
Գործնական պարապմունք՝	12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ ԳՏԳ 4-09-011

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտության` «Գյուղատնտես» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ բուսաբուծության և անասնաբուծության արտադրության գործընթացների, արտադրանքի իրացման, պահպանման, կազմակերպման խնդիրների, սկզբունքների և մեթոդների, ինչպես նաև տնտեսության ընդհանուր ռեսուրսային ներուժի օգտագործման կազմակերպման, հիմնական արտադրա-տնտեսական ցուցանիշների, բերքատվության և մթերատվության, արտադրական ծախսերի և եկամուտների պլանավորման վերաբերյալ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ
Տեսական պարապմունք՝ 36 ժամ
Գործնական աշխատանք՝ 36 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԳՏԳ 4-09-010 «Կերային մշակաբույսերի և բուսական ծագման կերերի արտադրության տեխնոլոգիաները»

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Կարողանում է հստակ շարադրել անասնաբուծության և բուսաբուծության հիմնական աշխատանքային գործընթացները, անհատական և խմբակային եղանակով աշխատանքի կազմակերպման առավելությունները և աշխատողների նյութական խրախուսման ձևերը,
2. Կարողանում է պլանավորել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը,
3. Կարողանում է հաշվարկել բուսաբուծական ճյուղի կազմակերպման համար անհրաժեշտ սերմերի, թունաքիմիկատների, վառելանյութերի և այլ նյութական միջոցների պահանջը:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է հստակ շարադրել անասնաբուծության և բուսաբուծության հիմնական աշխատանքային գործընթացները, անհատական և խմբակային եղանակով աշխատանքի կազմակերպման առավելությունները և աշխատողների նյութական խրախուսման ձևերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

1. Կարողանում է ճիշտ շարադրել և ներկայացնել աշխատանքային կոլեկտիվների կազմակերպման հիմնական սկզբունքները, անհատական և խմբային եղանակով աշխատանքի վարձատրության ձևերն ու կարգը:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գիտելիքների ստուգման նպատակով ուսանողին տրվում է առաջադրանք՝ տալ հստակ բացատրություն բուսաբուծական և անասնաբուծական հիմնական ճյուղերի աշխատանքային գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև անհատական խմբային եղանակով կհանձնարարվեն մի քանի տարբերակներ նախորդ մշակված աշխատանքային գործընթացի վերաբերյալ: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե ուսանողը կարողանա կազմակերպել որևէ աշխատանքային գործընթաց (թույլատրվում են որոշ բացթողումներ):

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Այս արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Օգտագործվում են համապատասխան գրականություն, գրաֆիկներ, գծապատկերներ, տեղեկատու վիճակագրական տվյալներ, ֆերմերային տնտեսությունների վերաբերյալ ցուցադրական նյութեր և բանվորական տետրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	12 ժամ
Գործնական աշխատանք՝	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է պլանավորել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. տիրապետում է գյուղատնտեսական մշակաբույսերի պլանավորման մեթոդներին,
- բ. ճիշտ է շարադրում բերքատվության վրա ազդող հիմնական գործոնները,
- գ. կարողանում է պլանավորել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին տրվում են առաջադրանքներ և տնտեսության վերջին երեք տարիների տվյալներ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի փաստացի բերքատվության և առաջարկվող միջոցառումների (պարարտացում, ոռոգում, բերքատու սորտերի օգտագործում և այլն) վերաբերյալ: Արդյունքի գնահատումը կկատարվի, եթե սովորողը կարողանա ճիշտ պլանավորել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, հանձնարարված տվյալների հիման վրա:(թույլատրվում են որոշ բացթողումներ):

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կիրականացվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում կօգտագործվեն վիճակագրական տվյալներ, նորմատիվային նյութեր, ուսումնա-մեթոդական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	12 ժամ
Գործնական աշխատանք՝	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է հաշվարկել բուսաբուծական ճյուղի կազմակերպման համար անհրաժեշտ սերմերի, թունաքիմիկատների, վառելանյութերի և այլ նյութական միջոցների պահանջը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է շարադրում բուսաբուծության ճյուղում օգտագործվող միջոցների տեսակները, տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը,
- բ. կարողանում է հաշվարկել տեխնիկական միջոցների, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների պահանջը,
- գ. ինքնուրույն հաշվարկում է սերմերի, տնկանյութերի, պարարտանյութերի, թունաքիմիկատների, վառելանյութերի պահանջը, որոշում ապահովածության մակարդակը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին կտրվեն ելակետային տվյալներ տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունների մշակաբույսերի ցանքատարածությունների, սերմերի, ցանքի, պարարտացման նորմաների վերաբերյալ: Կպահանջվի ուսանողից տալ հստակ բացատրություն բուսաբուծության ճյուղում օգտագործվող միջոցների տեսակների, տեխնոլոգիական գործընթացների հաջորդականության վերաբերյալ: Առաջադրանքը կատարելիս ուսանողը կարողանում է հաշվարկել տեխնիկական միջոցների, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների սերմերի, տնկանյութերի, պարարտանյութերի, թունաքիմիկատների, վառելանյութերի պահանջը և որոշում ապահովածության մակարդակը: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի, և գործնական աշխատանքների օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե ուսանողը ելակետային տվյալների հիման վրա կարողանա որոշել որևէ բուսաբուծական ճյուղի տեխնոլոգիական գործընթացի

հաջորդականությունը, անհրաժեշտ տեխնիկան, սերմի քանակը, պարարտանյութի և վառելանյութի պահանջարկը: Անհրաժեշտ է կատարել անսխալ, բացառություն կարող են կազմել աննշան թերությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների ձևով: Կօգտագործվեն աղյուսակներ, ցուցադրական նյութեր, նորմատիվներ, գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ բուսաբուծական մշակաբույսերի տվյալներ, տեխնիկական միջոցներ, հիմնական և օժանդակ գրականություն, բանվորական տետրեր և տեխնոլոգիկական քարտերի բլանկներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	12 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՐՔԱՅԱՎԱՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ ԳՏԳ 4-09-012

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտության` «Գյուղատնտես» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ պտղատու այգու համար հատկացված հողատարացքի նախապատրաստման, պտղատուների, հատապտուղների, սաղարթի ու թփերի խնամքի, այդ թվում էտի և ձևավորման, պատվաստման ձևերի, այգու մշակման և ծառերի խնամքի աշխատանքների վերաբերյալ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`	68 ժամ
Տեսական պարապմունք`	34 ժամ
Գործնական աշխատանք`	34 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ`

Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳՏԳ- 4-09-003 «Պարարտանյութեր նրանց տեսակները և օգտագործումը» մոդուլը:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

- Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է`
1. Կարողանալ հստակ ներկայացնել պտղատու բույսերի կազմությունը, աճն ու զարգացումը,
 2. Կարողանա տալ Հայաստանում աճող պտղատու և հատապտղատու բույսերի և խմբերի առաջնային տեսակների հատուկ նկարագիրը,
 3. Կարողանալ նկարագրել պտղատու և հատապտղատու բույսերի բազմացումը,
 4. Կարողանա նկարագրել այգու հիմնման աշխատանքները,
 5. Կարողանա ներկայացնել երիտասարդ և պտղաբերող այգու խնամքի աշխատանքները,
 6. Կարողանալ կազմակերպել ծառերի խնամքի աշխատանքները և բերքահավաքը:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանալ հստակ ներկայացնել պտղատու բույսերի կազմությունը, աճն ու զարգացումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. Կարողանում է հստակ ներկայացնել պտղատու բույսերի վերգետնյա մասերը,
- բ. Կարողանում է տալ արմատային ցանցի բնութագիրը,
- գ. Կարողանում է շարադրել ծառերի տարեկան և հասակային զարգացման փուլերը,

դ. ճիշտ է շարադրում պտղա-հատապտղատու բույսերի կյանքի պայմանները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողների գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն թեստային առաջադրանքներ պտղատու բույսերի վերգետնյա մասերի, արմատային ցանցի, ծառերի տարեկան և հասակային զարգացման փուլերի, պտղահատապտղատու բույսերի կյանքի պայմանների վերաբերյալ, ինչպես նաև կլիմի բանավոր հարցում թեմայի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլիմի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է պատասխանի թեստերի 90%-ին, իսկ բանավոր հարցման գերակշռող մասին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների ձևով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ պտղատու բույսերի վերգետնյա մասերի, արմատային ցանցի, ծառերի տարեկան և հասակային զարգացման փուլերի, պտղահատապտղատու բույսերի կյանքի պայմանների վերաբերյալ: Կօգտագործվեն ցուցադրական նյութեր, նորմատիվներ, գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ բուսաբուծական մշակաբույսերի տվյալներ, հիմնական և օժանդակ գրականություն, բանվորական տետրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	6 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանա տալ Հայաստանում աճող պտղատու և հատապտղատու բույսերի և խմբերի առաջնային տեսակների հատուկ նկարագիրը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է դասակարգում պտղատու բույսերը,
- բ. Կարողանում է ճիշտ տալ պտղահատապտղատու բույսերի կենսաբանական բնութագիրը,
- գ. ունի հստակ հասկացողություն սորտի, սորտատիպի մասին, տեսակների և սորտերի շրջանացման մասին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողների գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն թեստեր պտղատու բույսերի դասակարգման, և գործնական առաջադրանքի պտղահատապտղատու բույսերի կենսաբանական բնութագրի, սորտի, սորտատիպի, տեսակների և սորտերի շրջանացման մասին:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլիմի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի թեստերի 90%-ը և գործնական առաջադրանքի բոլոր պահանջները: Թույլատրվում են աննշան թերություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների ձևով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ Հայաստանում աճող պտղատու և հատապտղատու բույսերի և խմբերի առաջնային տեսակների հատուկ նկարագրի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	6 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանալ նկարագրել պտղատու և հատապտղատու բույսերի բազմացումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է շարադրում և տարբերակում սերմերով և վեգետատիվ ճանապարհով բազմացումը,
- բ. ճիշտ է նկարագրում վեգետատիվ բազմացման եղանակները,
- գ. Կարողանում է ճիշտ նկարագրել բույսերի վայրակների աճեցումը տնկարաններում,
- դ. կարողանում է նկարագրել պտղատու բույսերի տնկանյութի աճեցման տեխնոլոգիան:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

